

սահմանաց խաչենոյ, ի սբ ուխ... (տէն) Գանձասար մենաստանէ որ... [է հանդէպ?] դղեկիս Սխոտղան (Սխոտղան?) Հ(աւքա)խա [ղաց] առաջնորդութ... (եամբ սբ ուխ) տիս տն Յո... (վհանխիս անյա) զթ վար... (դապետի եւ) ածարել.../ զ պսակ եկեղեցոյ քի մաղթեմք ի յաւկտելոց իսմանէ յիշեսջիք զվերադրեալ քս ի տր զանուանս զհարազատքս ուշիմս եւ կարկառք մնամք աղաւթից ձերոց եւ զծնողսն մեր զԳերդէ փառաշ* եւ եւ զՇահանդուխտ եւ զայլ եղբարսս, եւ զք որս եւ զազգահինս մեր, որպէս զվոտիտ եւ զզը նդար (?) ամոլքը ընգալաք զարաւուս մշա կին երկնաւորի աւգնականութեան քի առ ի հերկեալ զակաւս սրտից ածայնոցը եւ սերմանել զընչիր ցորեանս, որ յագել լոցը էք ի քի շահական (s!) պտղոյս: Յիշեսջիք զմեզ եւ զամենայն յանձն արարելս ... ի ձեզ նաեւ զսրբասնեալ եղբարքս մեր ... (միարան)ակիցքս համաւերէն զծերսս եւ ... զորդիացեալսս սբ ուխ ... (տիս) յիշեալ լիջիք ի տր յս// անարգ նկար... (արդեօ՞ք նկարչի անունը պիտի լինէր)

...տես

...մախն ե

...տաղեց

ԹՎ ՌՁՁ (1237)

Նոյն ստացողները անթուական յիշատակարաններ ունին Մատթէոսի վերջում ՏՅ Բ Մարկոսի վերջում 139ա. ոչ բնագրի թերթի վերայ, այլ Ղուկասի պատկերի յետեւը. նաեւ Ղուկասի վերջում 236բ. բնագրի թերթի վերայ:

Հին, արեւելեան բոլորգրով. Բս ած ողորմեայ Գրիգորոյ եւ Վարդանայ... (փառա) շին որդեացն, ստացողաց սբ աւետարանիս ամէն:

Նոյն գրով. Բս ած ողորմեայ երկուց եղբարց պատուական քահանայից Գրիգորոյ եւ Վարդանայ, ստացողի սբ աւետարանիս ամէն:

Մեծ յիշատակարանի մէջ յիշուած Գանձասարի Վանքը գտնուում է Արցախի Սաչեն գաւառում, Սաչենագետի ձախ կողմը,

բարձրահայտաց լերան լանջին: Նորա դիմացն է, դետի միւս ափին, այժմ էլ Սղսաղան ըստ ժողովրդական կամ Հաւքախաղաց ըստ գրական անուան դադաթը, որ մի եւ նոյն ժամանակ Սաչենոյ իշխանների բերդն էր: Գորա տակն էր Սաչենի իշխանների նստոցը եւ ապարանքը, որոնց աւերակների հետքերը մինչեւ այժմ էլ երեւում են: Հաւքախաղացին կից արեւելքից Հաւապտուկն է, մի բլուր բազմաթիւ կենցաղական քանդակազարդ գերեզմանաքարերով. Հաւապտուկն էլ Սաղբակեան իշխանական տոհմի նախնեաց հանգրստարանն էր: Եթէ ձեռքի տակ ունենայինք տպուած կամ մեր հաւաքած արձանագրութիւնները այդ շրջանում, կարող կը լինէինք տեղեկութիւն տալ Գանձասարի Յովհաննէս առաջնորդի մասին: Յիշատակարանի թուականը Հասան-Ջալալ Գաւէի, տեղւոյն շինարար եւ մեծ իշխանի ժամանակն էր, Գանձասարի՝ այժմ էլ զեռ հաստատուն շէնքի վերջաւորողը, ըստ արձանագրութեան եւ ժամամակալից պատմիչ Կիրակոս Գանձակեցու տուած տեղեկութեան, կարծում ենք 1240 թուին վերջացած:

Կան եւ յետագայ ժամանակի յիշատակարաններ:

Այս նկարագրութիւնից եւ ցուցումներից պարզ է, որ Ձեռագիրը մի ամբողջութիւն չէ. այստեղ տեսնում ենք առ նուազը երեք ձեռքերի եւ ժամանակների աշխատանք: Բնագիրը ամենից հինն է, որի սկզբնազարդերն ու լուսանցքի զարդերը տարբեր արուեստ եւ ոճ ունին, քան Տէրունական պատկերներինն է, որի մանրանկարիչն է, ինչպէս տեսանք, «Աբաս նկարիչ տրուպ երէց»: Բայց այս երկուսից տարբեր է նաեւ խորանների արուեստը, որի ծագումը կապուած է մեզ իւր շատ գործերով յայտնի Իգնատիոս նկարչի եւ նորա աշակերտ Յովսէփի անուան հետ: Իգնատիոսի մասին մենք ունինք յատուկ ուսումնասիրութիւն* յայտնի են նորա մի քանի գեղագրական եւ գեղարուեստական արժէք ունեցող գործերը, ապա վերջերս նորա մասին լրացուցիչ տեղեկութիւններ հաղորդեց մեր երիտասարդ բանասէր բարեկամը, Պ. Յարութիւն Գիւրտեան:** Բայց նա ունի եւ ուրիշ գործեր էլ բանասիրութեան դեռ եւս ան-

*Այս բառը կրկնուած է Անիի Ամենափրկիչ եկեղեցու եւ Տիկարի արձանագրութիւնների մէջ «Սարգսի փարշկան», որ նկարիչ է նշանակում:

*Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ Հայ Արուեստի եւ Մշակոյթի Պատմութեան Պրակ. Ա. Երուսաղէմ. 1935:

**Անահիտ. 1939, Թիւ 3: